

ԴՕՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ ԴԵՊԻ ԿՂԵՐԱՍՏԱՆ

Habeat sibi.

Լուսանալուն պես Դօն Կարապետը վեր կացաւ, զարթեցրեց իր զրահակրին՝ Խէչաննց Խէչօին ու պատուիրեց նրան, որ ձին թամբի, զէնք ու զրահը պատրաստի. այդ օրը նա մեծ արշաւանքի էր գնալու:

Խէչօն (որը Արարատեան դաշտի Քամրաղդ գիւղիցն էր), քնաթաթախ վեր կացաւ ու մեծ անտարբերութեամբ սկսեց թամբի պատրաստութիւնը տեսնել: Ասպետական բոլոր զէնք ու զրահները բերաւ միանգամից թափեց Դօն Կարապետի առաջ, ու յետոյ գնաց ձին թամբելու:

Դօն Կարապետը շտապ շտապ հագաւ իր պողպատեղ գգեւտը, գլխին դրաւ սաղաւարտը, որ պիտի ասեմ, դալլաքի թաւ էր ու մեծ հնութիւն ու սրբութիւն էր, որովհետեւ նա նոյն նպատակով ծառայել էր և մեծահռչակ Դօն Քիշօտին, մեր Դօն Կարապետի ուսուչին, և չեմ իմանում ինչպէս էր սրա ձեռքն ընկել: Մեծ վահանի վրայ, այլ և Դօն Կարապետի աջ ու ձախ թևերին դրօշմած էր «Դ» տառը, որը ցոյց էր տալիս, թէ մեր ասպետը որ ուխտիցն (օրդէն) է. ոմանք ասում էին, թէ Դօն Կարապետը «Դրօշակեան» ուխտիցն է, ոմանք էլ թէ՛ «Դաշնակցութիւն զինուորաց» ուխտին է պատկանում:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, Դօն Կարապետը սկսեց ճառել, որ հասկացնի Խէչօին իր արշաւանքի նպատակը:

— Ո՛վ վեհ գաղափարներ, վսեմ իդէալներ: Ով աշխատաւոր ժողովուրդ, ո՛վ սուրբ սրբութիւն: Ով աղատութիւն, եղբայրութիւն... իմացիր, ո՛վ Խէչօ, իմ մեծ ծրագիրները. ազատութիւն, ազատութիւն կը տամ ես Հայաստանին. կը թոթափեմ նրա վրայից բռնաւորի լուծը. ապա իմացիր Խէչօ, որ ես սօցիալիստ եմ, իսկական, երոպական սօցիալիստ: Երդում եմ Խէչօ, ուխտիս անունով, այն սուրբ, որը խողխողեց սուրթանի ստուերն, կը մտցնի սօցիալիզմը ազգի մէջ: Ասպետներ կան, որոնք ասում են... (չհաւատաս, չհաւատաս նրանց, եթէ ոչ...) որոնք ասում են որ իբր ես սօցիալիստ չեմ, կամ

Թէ ասուած են, որ իբր ես մեծ կոուլի ժամանակ նստել էի ջո-
րու վրայ ու մի տեղ կանգնել և սուտ «չնւ, չնւ» էի անուամբ
Ոչ, ոչ, թող կորչեն այդ զրպարտիչները. ես իսկական,
եւրոպական սօցիալիստ եմ. ուզո՞ւմ ես համոզուել. ապա նայիր
վահանիս, աջ և ձախ թեւերիս, տես քանի «Դ» ունիմ. իսկ
նրանք, հաղիւ մի «Դ» ունենան, ես նոր իմացայ, որ այստեղ
էլ ըէժիմ կայ, (Տաճկահայաստանից վերադառնալուց յետոյ),
թէ չէ դու կը տեսնէիր թէ ինչէր կանէի. եւ հէնց այսօր ես
գնում եմ մեծ ուսուցչի՝ Դօն Քիշօտի գործը շարունակելու—
բռնակալներին հալածելու և զրկուածներին պաշտպանելու.
ես գնում եմ (ճայնոյ քարձրացնելով), այո, ես գնում եմ տա-
պալելու կեղեքիչ, բռնակալ կղերին, որը ժողովրդի ազատու-
թիւնը շղթայել է ու ստրուկութեան մէջ է պահում նրան...
Ուէջօն, որ վախից ու ահից առհասարակ ոչինչ չէր հաս-
կանում Դօն Կարապետի ասածներէից, միշտ նոյն պատասխա-
նէն էր տալիս.—«Հրամանքդ, Տէր, դրուստ ես ասում» Մակայն
այս անգամ Եւայի հետաքրքրութիւնը նրան էլ բռնեց և հարց-
րեց.

—էդ ռվ ա էդ կղերը, որի հետը կուլ անելու ես գնում:

—Ո՛վ տգէտ, միթէ չգիտէս, ռվ է կղերը. տէրտէր, վար-
դապետ, եպիսկոպոս, քորեպիսկոպոս—ահա սլա՛նք են քո
ազատութեան թշնամիները...

—Բո՛ռ եպիսկոպոսը քեզ թո՛չ ա արել, որ նրան ուզում
ես սպանել. իսկի աչք էլ չունի, թէ տեսնի. չլինի՞ հետը բա-
ժանելու բան ունիս...

—Դարձեալ տգիտութիւն. չգիտե՞ս միթէ, որ այդ կղերը
տէր է մեծ իրաւունքների ու կալուածների, որ նա խլել է ժո-
ղովրդից. և ես կոչուած եմ յետ խլելու այդ բոլորը ու քեզ
յանձնելու, ռվ ժողովրդի զաւակ. այսուհետեւ դու կը լինես մի-
ահեծան տէր և տնօրէն քո բախտի, քո իրաւունքների, կա-
լուածների, հողերի...

—Հա՛, հիմի գլխի ընկայ. միթամ ասում ես որ ինձ հողեր
պիտի տաս. բաս որ լսեցի ա, շուտ անհնջ գնանք:

Ու նրանք ճամբա ընկան Գամբաղի գիւղից դէպի Կղե-
րաստան վանքը, Դօն Կարապետը ձիով, իսկ Ուէջօն՝ իշով:

Դաշտը ամայացել էր. արտերը հնձած էին. տեղ տեղ օ-
աղիսի նման երևում էին գիւղերը. Դօն Կարապետն ու Ուէջօն
ուրախ զուարթ տրտինգ-տրտինգ առաջ էին գնում: Մէկ մէկ
Դօն Կարապետը յիշում էր կղերին ու դարձեալ փրփրում, ճա-
ռեր էր ասում. այսպիսի բռնակալներին Ուէջօն սարսափում էր
Դօն Կարապետի տոնից, ու մոռանում էր որ արդէն գլխի թէ
Սեպտեմբեր, 1906.

կղերն ի՞նչ բան է. և նրան թուում էր թէ կղերը մի ամենի գահան է, որին պիտի սպանի դո՞ Կարապետը. (այսպէս էր անուանում նա ասպետին, չկարողանալով յիշել «Դօն» մասնիկը):

Այսպէս նրանք տրտինգ-տրտինգ քշում էին միւսը եւր, մէկ էլ յանկարծ Դօն Կարապետը «կղերը» «կղերը» գոչելով, կրակ կտրած ու կատաղի դէմքով յառաջ քշեց իր ձին սրարշաւ, նիզակն առաջը պատրաստի բռնած: Խէչօն բերանը բաց արաւ որ զարմանայ, բայց իր եւր ժամանակ չտուաւ. սա էլ ձիու օրինակից վարակուեց, ջուխտ ոտով ոտոտտալով գնաց Դօն Կարապետի յետևից: Երբ Խէչօն մօտեցաւ իր ասպետին, տեսաւ, ի՞նչ տեսաւ. մեր Դօն Կարապետը մեծ ինքնաբաւակահանութեամբ դէմ էր տուել իր նիզակը մի խեղճ պառաւի կրծքին. կինը սրտածաք փռուել էր դետնին. իսկ կողքին ընկած էր իր պարկը, որից դուրս էին թափուել չոր հացի կտորները: Ու զիլ ձայնով Դօն Կարապետը կանչում էր. «յաղթութիւն, յաղթութիւն»...

—Դօ՞ Կարապետ ջան, էդ ի՞նչ ես անում, էդ կղերը չի, բոռ եպիսկոպոսը չի. պառաւ կնիկ ա, աղքատ ա, բաց թող գնա...

Բայց ում ես ասում. Դօն Կարապետը այնպէս էր յաղթութեան փառքով տարուել, որ Խէչօն ստիպուած մի տասն անգամ նոյնը կրկնեց, մինչև որ մեր ասպետը սթափուեց ու աղաւթ թողեց խեղճ պառաւին:

Նրանք շարունակեցին իրանց ճամբէն: Դօն Կարապետը դեռ ևս զառանցում էր ու շարունակ «կղեր» էր կրկնում. քիչ որ ուշքի եկաւ, ասաց.

—Ձհաւատաս, Խէչօ, որ դա կին էր. ճիշտ է, դա իսկական կղեր չի, բայց սե շորերը, որ ունէր հագին, ապացոյց էին որ նա բլօկ է կաղմել կղերի հետ: Բայց ես երբէք չեմ վախենալ այդպիսի դաւերից, ես կը տապալեմ բոլոր կղերականներին և բլօկը:

—Հրամանիդ, Տէր, դրուստ ես ասում:

Ահա վերջապէս երեաց Կղերաստան վանքը. տեսնելուն պէս Դօն Կարապետը ուղղուեց, ինքն իրան հաւաքեց, սպառնական դիրք առաւ. մի քանի անգամ պինդ հազաց ու պատրաստուեց յարձակուելու: Ձին արագ քշեց ու քշած էլ մտաւ կրկան վրայ լայն բացուած վանքի դռներով: Գաւթի: Ոչ մի ընդդիմադրութիւն չգտնելով, նիզակը պատրաստ բռնել էր առաջը, որ հէնց պատահի մեծ կղերին, իսկոյն յարձակուի: Հէնց այդ ժամանակ մեծ կղերը դուրս էր եկել զբաղնելու. սա ոտքից

աւ ձեռքից ընկած ծերունի էր, և հաղիւ էր կարողանում շարժուել:

Դօն Կարապետը որարշաւ մօտ քշեց ձին ու իր նիզակը կղերապետի կրծքին դէմ աւելով՝ դռաց.

— Կանգնիր, չհամարձակուես շարժուիլ տեղիցդ, կղեր, եթէ ոչ այս, նիզակը, որ պաշտպանում է սօցիալիզմի սուրբ գաղափարը, քեզ գետին կը տապալի: Վերջ, վերջ պիտի տամ քո բռնակալութեան. շուտով, շուտով ստորագրիր այս թուղթը, եթէ ոչ...

Նւ Դօն Կարապետը ծոցից մի թուղթ հանեց, որի վրայ գրած էր. «Նա ի ներքոյ ստորագրեալ մեծ կղերս հրաժարում եմ իմ ունեցած իրաւունքներից և կալուածներից և այդ բոլորը յանձնում եմ Խէչօին, որի անշափառասութեան պատճառով կալուածների կառավարիչը կլինի Դօն Կարապետը»:

— Էհ, օրհնեալ լինիս, ասաց մեծ կղերը. թուղթ ստորագրելը կուզէիր. էհ, այդպէս կառէիր, էլ ղէնը, գրահդ, ահ ու սարսափդ ինչի՞ն էր. թուղթ ստորագրելը կուզէիր. ահ, այն դիւանաւանը լիքն է թղթերով, կուզես կապոց մը թուղթեր ստորագրեմ տամ:

Այս խօսքերի վրայ Դօն Կարապետը զգացուեց.

— Ահ, Վեհափառ, ասաց նա. որքան մեծահոգութիւն, որքան աղատասիրութիւն կայ քո մէջ, թոյլ տուր, նվ Վեհափառ, աջդ համբուրեմ: Ու Դօն Կարապետը իջաւ ձիուց, չոքեց մեծ կղերի առաջ, աջը համբուրեց ու նա էլ պահպանիչ տասց Դօն Կարապետի դիւին:

Երբ ասպետը ոտի կանգնեց, ասաց.

— Թոյլ տուր, ով Վեհափառ, ի պատիւ քո շնորհների իմ ձին քեզ ընծայեմ:

— Օրհնեալ լինիս, պատասխանեց մեծ կղերը. ես էլ ի պատիւ քո գալստեան այսօր ևեթ քեզ տիրացու կը ձեռնադրեմ:

Այս սիրալի տեսարանից յետոյ մեծ կղերը նստեց Դօն Կարապետի ձին, իսկ Դօն Կարապետը՝ Խէչօի էջն, և մեծ շուքով, հանդիսականների ահագին խմբի հետ նրանք ուղևորուեցան դէպի խորհրդատունը: Երբ Դօն Կարապետը անցնում էր Խէչօի մօտով, նրա ականջին այս փափաց. «Դու գնա տուն. իրաւունքների և կալուածքների մասին քեզ իմաց կը տամ. քո մասին կը մտածեմ, անհոգ կաց»:

Խէչօն մնացել էր շուարած. մեր գնացին հողերը, կալուածքները... Նա մի փոքր էլ մնաց կանգնած, յետոյ կգահը

քորեց և կամաց-կամաց ճամբայ ընկաւ ոտքով դէպի իր գիւղը՝
ճանապարհին այս երգը երգելով:

Ձին տուել ես, իշուկն առել,

Առուտուրդ շնորհաւոր.

Վայ Քեօռօղլի, ջան Քեօռօղլի...

Այսպէս երգելով նա հասաւ Քամբաղդ գիւղը:

Ֆերնանդօ

Ե Ր Գ

(Էստոններէնից)

Երբ կը յոգնես, կը գազազես դու կեանքից,
Եկ իմ մօտս, դարձիր մօտս դու նորից,
Իմ հարազատ, սիրտս քեզնով է շնչել
Ձի կամենայ նա վերստին քեզ տանջել...

*
* *

Եթէ բախտն ու վայելքները քեզ ժլպտան,
Օտարները քեզ զգուանքով ողջոյն տան,
Գուցէ ես լամ բախտիդ համար, իմ անգին
Սակայն շարձիր, դարձիր մօտս դու կրկին...

*
* *

Եթէ հեռում ճակատագիրն անհոգի
Սիրտդ մատնէ՝ ձմեռնաշունչ տանջանքի,
Օ, գիտեցիր այնժամ սիրտս կը ցաւի
Ինձ կը տանջէ լուռ կսկիծը քո ցաւի:

Վահան Տ.-Գր.